Փոխոջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է երիս եւ կէս արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար։

վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապէս Պանճէ-Դաբուլ ջրավաճառ եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խանութները։

ՓՈՒՆՋ

Յանուագրման տոդը 3 դուրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կընկայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տճօրէն-Տէր Հ. Ս. Ալատճատեան կ. Պոլիս Պալըգ-բազար Նաճ-ըյէ խան վերի յարկ թիւ 16։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountc
—16 Nafié-Han, Balouk-Pazar 16—
CONSTANTINOPLE

Թիւ 2239 — ՇԱԲԱԹ — 1891 ՅՈՒՆՈՒԱՐ 26

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՋԻ

Է–ԿԻՒՄԻՈՅ Վ.ԱՐԴԱՊԵՏՈՅԵԱՆ։ – ԵՒ ԴՈՒ–ԿԻՒ ԿրօՆական ժողովը Յանուանելով Պատրիարքարանի թէ՛ վանքն պէտք եղածին չափ Միաբան վարդապետ չունի, երկու անձեր նշանակած և վարդապետ ձեռնադրել տալու հրաման խընդրած է։ Իսկ Պատրիարքարանը գրած է առ յիշեալ Կրօնական ժողովը որ նշանակեալ անձինք կ. Պոլիս ղրկուին, քննութեան ենթարկուին, և եթէ արժանի են՝ ձեռնադրուին։

Պատրիարքարանը շատ լաւ վարուած է՝ այս տնօրինութիւնն ընելով։ Կը յուսամք թէ՝ կը պնդէ իւր այս տնօրինութեան գործադրութեան համար։ Առանց անհրաժեշտ քննութեան, կամ՝ հարևանցի քննութեամբ ձեռնադրեալ վարդապետաց գոյութիւնն իւ կ. Պոլիս և իգաւառս ո՛չ սակաւ վնասուց պատճառ եղած է ժողովրդեան և վանորէից համար։ Զեմք ուզեր՝ այս առթիւ յայտնել յանուանէ նշանակել այդպիսի վարդապետներ։ Հանրածանօթ են բազումք որք ո՛չ միայն ժողովրդեան ճնշաւակար են, այլ և Պատրիարքարանը կըզբաղեցնեն յանչախս։ Եւ–դոկիոյ Կրօնական ժողովը եթէ արդարև վանքին օգտին և բարեկարգութեան փափաքող և նախանձախնդիր է, պարտի վարդապետացուներն կ. Պոլիս ղրկել իքննութիւն, և Պատրիարքարանը պարտի նոցա ուսման ու գիտութեան վիճակէն աւելի բարոյական վիճակն ու հանգամանքն առաջաբար քննութեան բովէ անցուներ. քննե՛լ նոցա անցեալ կեանքն, ազգային ու անհատական կեանքն, և վերջապէս թոյլ չտալ որ վարդապետական կարգ ու կերպարանք առնուն անարժան ու ճնշաւակար անձինք, և ժողովրդեան ու վանքերու մէջ արդէն գտնուած անձնապաշտ ու չարապարիշտ վարդապետաց վերայ քանի մը հատ ալ աւելնան։ Ազգին ողջախոհ ու բարեպաշտ մասն զղուած է այդպիսի եկեղեցականներէ, և նզովք կը կարդան բազումք այդպիսեաց յեկեղեցական կարգ մանելուն պատճառ եղողներուն համար. նզո՛վք կը կարդան այդպիսեաց վերայ ձեռք դնող և վարդապետական կարգ ու աստիճան ընծայողներուն վերայ։ Գոնէ՛ այսուհետեւ արթուն գտնուիլ. գոնէ՛ այսուհետեւ գայլերը գառանց կերպարանք չմտցունել և ժողովրդեան անմեղ հօտին մէջ չարձակել։

ԹղթակցութիւնՓունջի

Ո–ԼԲԸ. – 14 Յունվար 1891։ – Քաղաքիս լրագիրներն հետաքրքրական հաշիւ մը կը հրատարակեն, որ բացարձակապէս ծաղրելի լինելէ ուրիշ բանի չծառայեր։ Ինչպէս յայտնի է, քաղաքիս մէջ ժողովական կոչուած ազանդասէր տեղական Միսիոնարական ընկերութիւն մը ունին, որուն տեսչութիւնը յանձնուած է երեցի մը, որ՝ ուրիշ ազգաց քով չատ պատիւ չունենալուն պատճառաւ թերևս՝ իւր բոլոր ուշադրութիւնը դարձուցած է պանդուխտ Հայոց մէջ ամենէ տգէտ և ամենէ խեղճերը մոլորեցնելով իւր վարդապետը տանիլ. և այդ պաշտօնով իսկ ինքը իւր ապրուստը կրստանայ։ Սոյն անձն իրեն օժանդակ միսիոնար մ'ալ գտած է տարիէ մը ի վեր, և իրենց միացեալ աշխատութիւնը չատ արդիւնաւոր եղած է իրենց անձնական քսակները լիացնելու համար, տարեկան մէկ մէկ կլոր գումար թողլով ժողովական տգէտ և պարզամիտ կնիկներէ։ Այդ երէցն իւր տարեկան տեղեկագիրը մատուցած է այս օրերս, յորմէ կը տեղեկանամք թէ յիսուն Հայկան եղեր պատրաստ եկեղեցիի մը անդամ ըլլալու արժանի, բայց (ահա ուշադրութիւն ըրէք) 1500 տոլարի չափ դրամի պէտք կայ եղեր այդ ընկերութիւնը կազմելու համար։ Հազար հինգ հարիւրին մէջ երեսուն անգամ յիսուն կայ, որ ըսել է թէ՝ իւրաքանչիւր հայու հոգին փրկելու համար երեսուն տոլար պէտք է ծախք լինի, եթէ ոչ՝ Հայը կը մերժեն փրկուիլ։ Եւ որովհետեւ մեր Հայեր պանդուխտ են և դրամ չահելու համար եկած են այս երկիրը, իւրաքանչիւրին երեսուն տոլար (վեց անգլիական ոսկիէ աւելի) գէշ չէ. միայն եթէ Ամերիկայի ժողովական աղանդասէրք բոլոր Հայ ազգի հոգիները փրկել ուզեն, այդ համեմատութեամբ՝ հինգ միլիոն հայոց հոգիները փրկելու համար հարիւր յիսուն միլիոն տոլարի կամ երեսուն միլիոն անգլիական ոսկիէ աւելի դրամի կը կարօտին, որ՝ ժողովական աղանդասէրայ վիճակին հետ բաղդատելով՝ անկարելի է. մանաւանդ թէ Հայոց մէջ կան անա՛նկներ որ երեսուն տոլարի չեն ծախեր իրենց հոգիները. հետևապէս երէցին հաշիւը սխալ է և պարզապէս յիմարները խաբելու համար ըսած է։ Բայց աւելի հետաքրքրական մասն այն տեղն է որ սոյն երէցն իւր տեղեկագրին մէջ կըսէ թէ «Տարեվայն սկիզբը երկու կին իբր այցելու միսիոնար վարձեցինք. երկու ամիս առաջ երրորդ մը և վերջին օրեր չորրորդ մ'ալ վարձեցինք։ Ա.յս այցելուաց մին 35 տղայ բերաւ կիրակնօրեայ դպրոցը, կրսէ տեղեկագիրը, 50 անձինք եկեղեցիները (Հայք ըլլալու են) և միւսն 25 տոլար ծախք րրած է հիւանդ անձանց»։ Եւ կաւելցունէ չեշտելով. «Զորս հաւատարիմ կին այցելուներով առաջիկայ տարին չատ բարիք կարելի է ընել։» Ո՛վ կը զարմանայ եթէ 50 հայեր չորս կին այցելուներէ հրապուրուելով մոլորած են. պանդխտութեան մէջ կանանց ներկայութիւնը մոզական զօրութիւն մը ունի. նա մանաւանդ երբ երեսուն տոլարի չափ դրամ կայ փրկութեան ծայրը։ Պօսթոնի լրագիրներէ միսյն մէջ կը կարդամք հետևեալն, որ իբրև վերջնագիր մեր տուած տեղեկութեանց, բաւական ինքնայայտ է թէ ո՞ւր ենք և ի՞նչ կրնեմք։ Ահա լրագրին տեղեկութիւնը։ «Ձըրչի Սիթիի (Նիւ–Եորք քաղաքի դէմ մեծ քաղաք մ'է) քարոզիչ պատուելի Պըրիս կրսպառնայ հրաժարիլ իւր քարոզչութեան պաշտօնէն, եթէ եկեղեցւոյն անդամները չդադրին սիրաբանութիւն ընելէ՝ աղօթքի ժողովներու ժամանակ։ Իւր բողոք կերևի թէ կատարելապէս արդարացի է. աղօթքի ժողովներն այսպիսի աշխարհային գործերու տեղ չեն։» Եթէ աղօթքի ժողովներու մէջ սիրաբանել այնչափ համարձակօրէն տեղի կունենայ որ երէցն կրսպառնայ հրաժարիլ՝ պատճառ ցոյց տալով իւր եկեղեցւոյ անդամոց այդ խայտառակութիւնը, անկարելի է մեզ արհեցուցս համար։ Ուստի ուրախ ենք որ մեր ժողովրդեան մէջ այդ տեսակ սովորութիւններ չկան։ Մ. Յ. Թ–ՓՓՆԵԼՃԱՆ

Զըլե. 17 Յունվար 1891։ – Ականից իբր 3 ամիս առաջ ագարակապետ Ռ.Հմէտ էֆէնտին լուր տանող և 3000 ոսկի փրկանք ստացող անուանի հրոսակախումբէն Յատաստ անուն աւազակն, հաղիւ երեսնամեայ կայտառ երիտասարդ մը, որ աստ յոյն ընտանիքի մը մօտ դարանամուտ եղած էր՝ անչուշտ նոր չահատակութիւններ իգործ դնելու դիտմամբ, – այս օրերս ձերբակալ եղաւ շնորհիւ աչալրջութեան գիւղաքաղաքիս Յանտարմա Միլազիմի Հիւսէյին աղային, որ բնիկ Պօլսեցի է։ Ռ.Հմէտ էֆէնտի՝ իրեն ուղղուած հեռագրի մը համաձայն այսր գալով՝ ճանչցաւ ձերբակալեալն, և հաստատեց թէ արդարև միևն էր դինքն երեք ամիս պահող և ամենուրեք արհամարհք սփռող ա՛յն յանդուգն հրոսակախումբին, զոր կայսերական կառավարութիւնն թէև միջոց չխնայեց հալածական վարելու և անմիջապէս ձեռք անցընելու համար, բայց չյաջողեցաւ։ Ստամատ այժմ ի բանտի է տեղւոյս կառավարութեան պաշտօնատան մէջ և հարցաքննութեան ենթակայ՝ գինքը պատըրաստող ընտանեաց հետ։ = Թրակիոյ Հայոց այցելու հովիւ Գեր. Տ. Հմայեակ Սրբազան հայ բանտարկելոց աղաւաւթեան նկատմամբ պատրիարքական ծանուցեալ հեռագրին մէկ պատճէնն Աբժ. Պաղտասարեան Հօր հաղորդած և յանձնարարած լինելով յատենի եկեղեցւոյ և իւրաքանչիւր ժողովրդեան աւետել մեր առատագութ Վեհափառին Հայրական գթութեան այս նոր ապացոյցն, և աղօթել վասն արեւշատութեան նորին կայսերական Վեհափառութեան, – այս կիրակի առաւօտ նախ քան զսուրբ Պատարագն, նոյնութեամբ ընթերցաւ պատրիարքական հեռագիրն, և բացատրելէ յետոյ թէ նորին Վեհափառութիւնն ո՛րքան համակիր և հոգածու գտնուած է և կը գտնուի միշտ հանդէպ Հայ ազգին, և թէ հետևաբար մեք ևս ո՛րքան փութով և հաւատարմական գործակատար փորձերով պարտիմք փութալ նորին կայսերական կառավարութեան այս մանաւանդ հոգածութիւնը, յորդոր կարդայ ժողովրդեան՝ ի խորոց սրտի ձայնակից հետևեալ մաղթանքին, զոր արտասանեց ամենայն երկիւղածութեամբ, և որ ներկայ ունկնդիր ժողովրդեան միաձայն և սրտաբուղխ ամէններով չեշտուեցաւ։ «Թագաւոր խաղաղութեան, օգնական և փրկիչ տիեզերաց Քրիստոս Աստուած մեր, անսասան պահեա՛ զկեանս և զգահ Օգոստ. կայսեր մեր Սուլթան Համիտ Բ. ի բնդ հովանեաւ ամենազօր Աջոյ քո. փրկեա՛ և զազգ մեր ողջոյն յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, յազգայնոյս խռովութենէ և յօտարամուտ թելադրութենէ. արժանաւորեա՛ զոհութեամբ և խաղաղութեամբ կեալ և փառաւորել զքեզ ընդ Հօր և ամենասրբոյ Հոգւոյդ այժմ և յաւիտեանս։»

Հիւսնիմանսուր. 13 Դեկտեմբեր 1890։ – Տեղւոյս ազգային վարժարանն քայքայեալ վիճակի մէջ գտնուելով՝ Խրախուսանօք Աբժ. Տ. Ցարութիւն Ծ. վարդապետ Առաքելեանի, չինուեցաւ մի փառաւոր վարժարան՝ իբր 200 ոսկի ծախիւք, որուն չքեղութիւնը՝ բաղդատմամբ մօտակայ քաղաքաց վարժարանաց՝ եզակի է. բայց ի՞նչ օգուտ վարժարանի չքեղութենէն, երբ մէջը պարապ՝ դաստիարակութենէ զուրկ է. չկայ ո՛չ դաստատու, ո՛չ խնամակալ և ո՛չ ալ հոգաբարձու, որ ազգին խեղճ և անկիրթ զաւակներն դաստիարակեն կրթեն և խնամեն. ափսո՛ս որ Հիւսնիմանսուրի Հայք անտարբեր կը գտնուին. չունին ուսման և կրթութեան սէր և փափագ։ Արդարև, քաղաքիս Հայք՝ բաղդատմամբ դրացի քաղաքաց Հայոց դրամական զօրութեան հետ՝ թէ՛ առատելութիւն և թէ՛ փայլուն թիւն ունին. և եթէ կամին՝ թէ՛ եկեղեցին և թէ՛ վարժարանը կարող են լաւ վիճակի մը վերածել, բայց չեն կամիր. չեն կամիր, ըսի, քանզի ասոնց միութեամբ և սիրով շատ գործելնին լսած և տեսած եմ. միութեամբ հազար ոսկւոյ պանդուխ մը չինած են։ Զէ՞ որ այդ ստակը ասոնք տուած են. ո՞ւր մնացին արդեօք այդ անձինք, որ վարժարանի չինութեան գումարը պանդուխի վարձքով և պակասն ալ չահով առնելով չինեցին. կարծեմ՝ ամենքն ալ աստ են. սակայն գործելու կամք ու սիրտ և ուսման ճաշակ չունին, և եղածն ալ՝ մանկանց պաշտելնուն համար՝ հեռագիտէ մարելու վրայ է. թերևս նորէն բորբոքի, բայց սպասելու ժամանակ չկայ. գործելու ժամանակ է։ Տ. Ցարութիւն վարդապետ՝ գործելու և աշխատելու կամք և սիրտ ունի, բայց անոր ալ օրապահիկին հայթայթելու չափ դրամն ամսական մը տալու և պահելու ոչ միտք և ոչ ալ կամք ունին։ Ուսուցիչ Գեւսանեանի ճանրայ տալէ յառաջ, պարտէին անկէ աւելի փորձառու և ուսեալ դաստատու մը պատրաստել. աւելի դաստատի պէտք ունէին՝ եղածն ալ ճամբեցին, թողլով 150 աշակերտները հասարակ ընթերցանութիւն ուսուցանողի մը խնամոց, խորհելով թէ ա՛ն ալ բաւական է. քանզի եթէ վարժարանը բարեկարգեալ վիճակի մէջ ըլլայ՝ փողոցները դաստարկաչըրջիկներէ զերծ կը մնան. եթէ տղայ մը կէս ու կիսատ կարդալ սկսեր է՝ ծնողք՝ տէրտէր, վարդապետ չպիտի ըլլայ ըսելով, կը տանին արհեստագործի մը քով. երանի՛ թէ գոնէ արհեստը սորվէին. եթէ խոհականութեամբ վարուած ըլլային՝ 50 ոսկիի վարժարան մը բաւական էր. միւս մնացեալ ստակն ալ աշակերտաց դաստիարակութեան համար կրնային ծախսել. տուածնուն չահն ալ կը մնար։ Արթնցէք ա՛ Հիւսնիմանսուրի հայեր, ժամանակը միշտ կը սահի կերթայ, գործելու համար մի՛ յապաղէք, դաստիարակեցէք ձեր զաւակները, քսակնիդ բացէք, մի խնայէք նոցա կրթութեան համար. գուցէ օր մ'ալ անոնք ձեզ համար չհնային. դաստատուներ բերէք, հոգաբարձուներ, խնամակալներ կարգեցէք, աղջկանց համար վարժարան հաստատեցէք. ձեր քաղաքը յառաջադիմելու ընդունակութիւն և ապարդ ունի. միայն ձեր չարժման կարօտ է։

Հիւսնիմանսուր. 7 Դեկտեմբեր 1890։ – Հնտախոտը քանի մը ամսէ ի վեր է որ Բերիոյ նահանգի և չըրջակայ գաւառաց և գաւառակաց մէջ սոսկալի կոտորածներ կը գործէր, ոչ սակաւ երկիւղ պատճառեց մեզ ևս, քանզի մեր քաղաքն կապուած է Բերիոյ հետ առևտրով, և որ մեծն է՝ տեղւոյս չինքերը գետնայարկ, խոնաւ և մաքրութեան ճաշակէ զուրկ են, նոյնպէս փողոցներն և քաղաքին չըրջակայ վայրերն ալ ազտեղութեան մէջ կը լողան. ժողովուրդն մաքրութեան հոգածութիւն չունի. կառավարութեան գործած ազդու միջոցներն չէին բաւականաւոր։ Այսպիսի պարագայի մը մէջ պարտիմք չնորհակալ ըլլալ Նախախնամութեան, որ քաղաքս Մեծ. Օսման Փէհմի էֆէնտիի նման գործունեայ, աշխատասէր, արդարասէր, կանոնագէտ, Տէրութեան և Ազգին համար իւր անձը

Մոսկվա. 21 հունվար 1894։ —
Ղրկում է Ռ. Փափազյան
Հրատարակություն Ազգային գրադարանի։ — Հունվարի 18 ին միայն, Ծննդեան օրում, ընթերցողների թվում եղան 250 հոգի։ Ընթերցողների մեծ մասը ուսանողներ էին։ Ընթերցասիրութեան մեծ զարգացման մասին է վկայում այն հանգամանքը, որ ընթերցողների մեծ մասը ուսանողներ էին։ Ընթերցողների մեծ մասը ուսանողներ էին։ Ընթերցողների մեծ մասը ուսանողներ էին։

ՅԱՅԱՍՆ ԴԱՒԱՆՅՈՂ

Ուրբաթ, Նոյեմբեր 1891 թ. 26

Օրական գին 100 դրամէն

Ծանրագին փետուրներ . . .	20-38
Ոսկեզօծ իրիկնաժամ . . .	77-ից վեր
Ծխելիք . . .	1.0.50-

Ամսեկան գին 3 դրամ

Կիրակի	108-20
Երկուշաբթի	100-30
Երեքշաբթի	102-30
Չորեքշաբթի	102-30
Հինգշաբթի	102-30
Ուրբաթ	7-85
Շաբաթ	25-20
Կիրակի	89-30
Երկուշաբթի	87-5
Երեքշաբթի »	109-38
Չորեքշաբթի	51-10

ՅԱՅԱՍՆ ԴԱՒԱՆՅՈՂ

= Յայտնի եղաւ որ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ Ֆրանսայի հանրապետութեան հիմնադրութեան 100 տարեկան յոբելեանը պիտի տօնուի Մայիս 1-ին 1892 թուականին։ Ֆրանսայի կառավարութիւնը ընդունած է հրաւէրը եւ պատրաստութիւնները կը տեսնուին։

= Ֆրանսայի Ազգային Ժողովը (Շամպր տը Տեփիւթէ) ընտրեց իր նախագահ Ռուվիէ-ն։ Ան ստացաւ 300 ձայն։ Ռուվիէ նախկին նախարարապետ է։

= Ֆրանսայի Սենատը (Սէնաթ) ընտրեց իր նախագահ Լէռնէ-ն։ Ան ստացաւ 179 ձայն։

= Ֆրանսայի Ազգային Ժողովին մէջ Ռուվիէ նախարարապետը յայտնեց որ Ֆրանսա պիտի չմիջամտէ Պրազիլի ներքին գործերուն։ Ան ըսաւ որ Ֆրանսա պիտի պահպանէ իր չեզոքութիւնը

և 25 հոգի մեռեր կամ վիրաւորուեր են։

= Ռուսիոյ կայսեր երկրորդ որդին Կէորկիոյ Ալէքսանդրովիչ՝ որ մեծ եղբօրն հետ չրջագայիլ եւած է ռուսական նաւատորմին մէջ սպայ է, մարտանաւու մը կայմէն վար ինկեր է ծանրապէս զնասուեր է, գրուեցաւ. սակայն պետրսպուրկէն հերքած են այս լուրն։

= Ի Սոֆիա անցեալ տարի հրացանի բռնուած փանիցա հազարապետի պ. Սթամպուլօֆի մէջնորդութեամբ ամնանայեր է տեղւոյն ազգային պանքայի տնօրէն Պ. Թէնէվի հետ։

ՍՅԼ ԵՒ ՍՅԼՔ

×× Դպրոցի ֆոթոյ ուէուքներէն։ — Ինչպէս յայտնի է, ժամանակ մը ի վեր Ամերիկայի Միացեալ Նահանգաց ազգային բանակին ու բնիկ վայրենի հնդկաց մէջ պատերազմ կայ։ Որովհետեւ Ամերիկացւոց բանակն հազարապատիկ զօրաւոր է քան զբնիկ տարրը, վայրենիներ կիներն պատերազմի ժամանակ պաշտօն ունին ալակիլ իրենց կոչտ եղբարց, առ հասարակ վիրաւորեալ զինուորաց դըլուխը ջախջախելով, պաչար տանիլ բերելով, եւն։ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը թէեւ մէկ կողմանէ բնաջինջ ընել կուզէ այդ վայրենի տարրը, բայց միւս կողմանէ ալ հոգ կը տանի զիրենք լուսաւորելու. և ահա այդ նպատակաւ՝ ուրիշ բարեգործութեանց հետ, տղայոց և աղջկանց դպրոցներ ևս բացած է։ Վերջին օրերս աղջկանց դպրոցաց միոյն տանի չափ աշակերտուհիներն փախած են թշնամւոյն բանակն, իւրեանց եղբարց օգնելու նպատակաւ անտարակոյս. դոցա անուններն կը հրատարակեմք իբր հետաքրքրական ինչ։ Դպրոցէն փախչող օրիորդաց անուններն և մականուններն են հետեւեալը. գիտնալու է սակայն թէ առաջին անուններն վերջէն տրուած են իրենց, և ոչ թէ բնիկ լեզուաւ այնպէս կը կոչուին։ Օրիորդ Լիզի՝ Նստած Արջ. Օր. Մակի՝ Վազող Գայլ. Օր. Էմիլի՝ Որոտում. Օր. Մերի՝ Կարմիր Ամպ. Օր. Լուսի՝ Կարմիր Ձի. Օր. Բէյթի՝ Անպուչ Շուն. Օր. Մինի՝ Էգ Աղուէս. Օր. Գոմէչի՝ Աչք։

×× Խոհուրդ Մոդեան։ — «Ունէր եմ ագարակի մը՝ որ կը բերէ 500 անգղիական ոսկի հասոյթ, կըսէ ծեր և դաժան կրէկուար՝ Տէրպի կոմսին նախկին ագարակապետն, իւր նոր ստացուածոյ մէկ մասը կազմող բլրակի մը վրայ եղնելով. ահա տէր եմ 500 ոսկի հասոյթաբեր ստացուածքի մը, և 60 տարեկան եմ, փա՛ռք Աստուծոյ, ողջ առողջ, կրնամ արհամարհել ուզածիս պէս մեղ դէմ դաժան և ամբարիշտ եղող բոլոր ա՛յն Լորտերը. կրնամ ոխս առնուլ ինձ գլխարկ չհանող և ոխս կոշտաբար ջրելը կրէկուար կոչել չարունակող բոլոր այն գիւղացիներէն։ Կենացս մնացած մասն ուրախութեամբ պիտի անցունեմ։ Ահա տէր եմ աղուոր գեանի և տան մը, չարունակեց բլրակին գագաթն հասնելով, ուսկից կըտեսնէր իւր ստացուածոյ ամբողջ տարածութիւնն։ Աստ պիտի տնկեմ մրգաստան մը. անդ պիտի ունենամ անկարան մը. իմ բազմաթիւ հօտերս Պէտֆորի դքսին հօտերէն աւելի գեր լինելով՝ մըրցանակի արժանի պիտի հանդիսանան. աստանօր մօտը պիտի չինեմ ամարային տուն մը, ուր պիտի հաւաքեմ երկրին նշանաւոր անձերն, որպէս զի նոցա զուարթ խօսակցութիւնը կարենայ զիս ըզբօսցնել։ Պիտի ունենամ կալուածոց վերակացու մը։ — Տէ՛ր, ագարակին վարձուց հասոյթն ինչ պիտի լինի։ — Հարցուցեք զայդ վերակացուիս, այսպիսեօք ղբաղիլ ինձ անկ չէ, պիտի պատասխանեմ։ — Աղօրիքը դարձնող գետակին ճանբան պիտի փոխեմ և պարէտին մէջ պիտի բերեմ։ — Ով պիտի աղայ գիւղին ցորեկը, եթէ առ ի չգոյէ ջրոյ աղօրիքը կասի։ — Հարցուցեք վերակացուիս, պիտի ըսեմ, այդպիսիք իմ խորհելիք բաներս չեն։ — Երիցասունք տան տեսարանը կըննդէ. պիտի սոիպեմ երէցն որ երիցասան հողն ինձ տայ. պիտի փորել տամ անդ աւազան մը, որուն ջուրը ցայտէ օդոյն մէջ և ոդևորէ տեսարանն։ — Ով եկեղեցական պաշտօնն պիտի մատակարարէ, եթէ երէցը ճանրէք։ — Հարցուցեք վերակացուիս, պիտի գոչեմ։ = Այսպէս ինքնին խօսելով՝ տունը կը վերադառնայ. կուտէ, կը խմէ, կը ծխէ և ա՛յն պիտի խոր քուն մը կը քաշէ որ ա՛լ չարթննար։ Երէցը կը մնայ երիցասունը. աղօրիքը կը չարունակէ աղալ, և գիւղացիք՝ ծերունի կրէկուարի մահուան վերայ ուրախացած՝ Խուհուդը Մոդեան, կամ Ապոթոթոյ կըսեն։

××× Ջոսաֆաթ։

Գիւղացի մը դատի մը համար խորհուրդ կը հարցունէ փաստաբանի մը։ Դատդ լաւ է, կըսէ փաստաբանը՝ դատին վերայ գիւղացիին տուած ծանօթութիւնները լսելէն ետքը։ Գիւղային դուռմար մը կը վճարէ և կըսէ. — «Արդ, որովհետեւ վճարած եմ, անկեղծօրէն ըսէք թէ դատս դարձեալ լաւ կը համարի՞ք։

— Գաղղիոյ կենդանական պարտիզաց միոյն տեսուչը, Պելճիոյ թագաւորին պատուոյ ընդունելութեան առեն, թագաւորը դիտել կուտայ թէ անասունք չատ չեն։ — «Տէ՛ր արքայ, կըսէ տեսուչը, մեր հասոյթք չատ չեն արդ. տակաւին նոր ակած եմք. բայց որչափ չատ անդամ ունենայ մեր ընկերութիւնն, այնչափ չատ անասուն պիտի ունենամք։

— Հայր մը դպրոցական 15 տարեկան տղուն կը հարցունէ. — Գէօրգ, կարգիդ մէջ քանի՛ երորդ ես. — Քսան և վեցերորդ. — Կարգիդ մէջ քանի՛ տղայ կայ. — Քսան և վեց. — Դժգոհ եմ, — Մէկ քանի ամիս միւնոյն հարցմունք և միւնոյն պատասխանք կը չարունակուին, մինչև որ տղան քսան և հօթներորդ լինելը կը յայտնէ։ — Ինչ հաշիւ է այդ, կըսէ հայրն. — Հա՛յր, նոր տղայ մ՚ալ եկաւ, կը պատասխանէ տղան։

— Հէնրիկոս Ը. արքային Անգղիոյ պատերազմ ունենալով Գաղղիոյ Ֆրանսուա Ա. թագաւորին հետ, կորոշէ դեսպան մը ղրկել առ նա կոշտ ու խրոխտ խօսքեր ըսելու համար, և կուզէ Պոնէր եպիսկոպոսին յանձնել այս պաշտօնն, վասն զի նորա վերայ չատ վստահութիւն ունէր։ Եպիսկոպոսը յանձն չառնուր այս դեսպանութեան պաշտօնն, ըսելով թէ՝ իւր կեանքն ի վտանգի կը դնէ, եթէ այդպիսի խօսքեր ուղղէ Ֆրանսուայի պէս խրոխտ թագաւորի մը։ — «Բանէ մը մի՛ վախնար, կը գոչէ Հէնրիկոս, եթէ Գաղղիոյ թագաւորն սպաննել տայ զքեզ, ես ալ աստ գտնուած չատ մը գաղղիացւոց գլուխները կարել կուտամ. — Լա՛ւ, կը յարէ եպիսկոպոսն, բայց այդ գըլուխներուն և ո՛չ մին իմինիս պէս (գլուխը ցցունելով) ուսոցս վերայ չեն յարմարիր։

— Զոքանչ մը կայցելէ վեսային տունը։ Թոռնիկը մամուն ծոգաց վերայ մագլցելով «Մեծ մայրի՛կ, կուզեմ տեսնել լեզուդ. կըսէ, ևան գի հայրիկս կըսէ թէ իժի լեզու ունիս. տեսնեմ թէ ինչպէս բան է։»

— Երկու նոր ամուսինք ամուսնութենէն արձանագրիչ նոտարին քովէն դառնալուատեն, այրը կը հարցունէ կնոջ թէ՝ ինչո՞ւ այդչափ խռովեալ էք, և ինչո՞ւ դժուարաւ կրցաք արտասանել ամուսնութեան հաճութեան համար այն։ — Ճշմարիտ է, կը պատասխանէ կինը, սակայն ուրիշ անգամ աւելի լաւ կարտասանեմ։

— Սպասաւոր մը խմանալով որ տան դուռը կը բաղխեն, կերթայ կը բանայ և հետեւեալ խօսակցութիւնը կը լինի. — Ջո՞վ կուզէք. — Տէրդ. — Ինչ պիտի ընէք. — Հաշուոյ մը համար. — Երէկ գնաց. — Սակայն վճարելիք մը ունիմ. — Ուրեմն այս առաւօտ գիւղէն վերադարձաւ։

— Դատարանի մը մէջ երբ նախագահն կը հրամայէ ամբաստանեալի մը ոտք ելնել, ամբաստանեալն՝ հոգածութեան երեւութով մը կըսէ. — Բայց հարցաքննութենէ յառաջ բան մը պիտի հարցունեմ. արդեօք հիւանդ էք, վասն զի վերջին անգամ զձեզ տեսնելէս ի վեր փոխուած կըտեսնեմ։

— Կին մը՝ դժգոհ լինելով ամուսինէն՝ միշտ կուլայ կոչելայ, և երբ կը հարցունեն թէ ուրնմն ինչո՞ւ ամուսնացար, — կը պատասխանէ. — «Ի՞նչ գիտնամ. բժիշկը րսին թէ հազիւ երեք ամիս կրնայ ապրիլ։

Բանտելէն երկաթուղեայ բաժնետոմսերուն 126 րդ վճռահանումնեան մէջ պրեմներըը

Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.
1599596	300000	210540	1000
1346710	25000	242481	»
1055872	10000	313922	»
1977457	»	455754	»
101928	2000	483675	»
155203	»	521696	»
360395	»	521700	»
1071739	»	575978	»
1776119	»	694100	»
1779591	»	707579	»
242484	1250	851194	»
301079	»	856939	»
562893	»	971651	»
694097	»	994190	»
851192	»	1025690	»
1032265	»	1068910	»
1071740	»	1366319	»
1108867	»	1399121	»
1254901	»	1406927	»
1359360	»	1541504	»
1532976	»	1574691	»
1574695	»	1582315	»
47006	1000	1646584	»
99619	»	1776116	»
99620	»	1801518	»

Երիտասարդ մը, վկայեալ բարի վարուք, որ գիտէ գաղղիարէն ու հայերէն, կը փափաքի մասնաւոր տան մը մէջ ժանկավարժի պաշտօն ըստանձնել։ Պէտք ունեցողը կը հրաւիրուի առ անօրինուելով թէ՛ կը հրատարակուի, ի Կ. Պոլիս՝ Պալըգպազար, Նաֆիյէ խան՝ վերի յարկ Թ. 16։

ԵՐԿԱՐ ԱՊՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՍԿՋԲՈՒՆՔ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Թարգմանեց

Աչալուրկ Թադէոս Կէզիւրեան

Սոյն գործ՝ ընտիր և պարզալսօս աշխարհաբարի թարգմանուած, բառատորի մը յաւելուածով ճոխացած, ի լոյս ընծայեալ ի Ճիվէլէկեան տպարանէ, դիտութեան արդի յառաջադիմական սկզբանց համաձայն, եւ ընտանեկան խօսակցութեան պարզ ոճով մը՝ կենաց բնութիւնը կը ծանօթանէ, երկրագնտիս վրայ նորա ծագումն ու յառաջդիմութիւնը կը մեկնէ, նորա անվթար պահպանման եւ երկարաձգման հարկաւոր միջոցները կը թուէ եւ բացատրէ, եւ որ առաւելն է՝ բարոյականին առողջ, երկայն եւ երջանիկ կենաց մի անհրաժեշտ տարրը լինելը կապացուցանէ. ուստի եւ ամենայն իրաւամբք կրնայ եւ արժանի իսկ է ամէն դասու, վիճակի, հասակի եւ սեռի անհատից ձեռք անխափ տրուիլ յընթերցումն։ Նաև իբրև միակ ապրուստի միջոց համակրելի թարգմանչին՝ կը յանձնարարուի երկս ամէն կարգի աղգայնոց, որպէս զի մէկ մէկ օրինակ ունենան իրբու կենաց ճշմարիտ ուղեցոյց և մեծապէս օգտին։ Կը վաճառուի ամէն Հայ դրավաճառաց եւ մասնաւորապէս Ջրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից քով։ Ինչպէս նաև Կալաթա Սէրայի մօտ Ծխավաճառ եւ սեղանաւոր Նշան եւ Գրիգոր աղայից խանութը, ի գին 10 ղրշ։ Շատ գնողք դիմեն Պօղոս աղայի, որոց մասնաւոր զեղչ կը լինի։

ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ ԲՈՒՐԱՐԱՆ

Թուրքերէն է Հայերէն

Սոյն բառարանը խնամով մեծաւ պատրաստեալ է Թուրքերէն լեզուի բազմամեայ արդիւնաշատ ուսուցիչ Գալրպճեան էֆէնտիի աշխատասիրութեամբ։ Թուրքերէն կարեւոր լեզուի ուսման պատրաստ ղաց և այլոց համար մեծապէս օգտակ է։ 20000 բառ կը պարունակէ, յորս են նաև դիտականք, արհեստականք, և այլն։ Գինն ալ շատ դիւրամատչելի է. — 15 ղրշ։

ԵՐԿԱՐ ԱՊՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՍԿՋԲՈՒՆՔ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Թարգմանեց

Աչալուրկ Թադէոս Կէզիւրեան

Սոյն գործ՝ ընտիր և պարզալսօս աշխարհաբարի թարգմանուած, բառատորի մը յաւելուածով ճոխացած, ի լոյս ընծայեալ ի Ճիվէլէկեան տպարանէ, դիտութեան արդի յառաջադիմական սկզբանց համաձայն, եւ ընտանեկան խօսակցութեան պարզ ոճով մը՝ կենաց բնութիւնը կը ծանօթանէ, երկրագնտիս վրայ նորա ծագումն ու յառաջդիմութիւնը կը մեկնէ, նորա անվթար պահպանման եւ երկարաձգման հարկաւոր միջոցները կը թուէ եւ բացատրէ, եւ որ առաւելն է՝ բարոյականին առողջ, երկայն եւ երջանիկ կենաց մի անհրաժեշտ տարրը լինելը կապացուցանէ. ուստի եւ ամենայն իրաւամբք կրնայ եւ արժանի իսկ է ամէն դասու, վիճակի, հասակի եւ սեռի անհատից ձեռք անխափ տրուիլ յընթերցումն։ Նաև իբրև միակ ապրուստի միջոց համակրելի թարգմանչին՝ կը յանձնարարուի երկս ամէն կարգի աղգայնոց, որպէս զի մէկ մէկ օրինակ ունենան իրբու կենաց ճշմարիտ ուղեցոյց և մեծապէս օգտին։ Կը վաճառուի ամէն Հայ դրավաճառաց եւ մասնաւորապէս Ջրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից քով։ Ինչպէս նաև Կալաթա Սէրայի մօտ Ծխավաճառ եւ սեղանաւոր Նշան եւ Գրիգոր աղայից խանութը, ի գին 10 ղրշ։ Շատ գնողք դիմեն Պօղոս աղայի, որոց մասնաւոր զեղչ կը լինի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ ԲՈՒՐԱՐԱՆ

Թուրքերէն է Հայերէն

Սոյն բառարանը խնամով մեծաւ պատրաստեալ է Թուրքերէն լեզուի բազմամեայ արդիւնաշատ ուսուցիչ Գալրպճեան էֆէնտիի աշխատասիրութեամբ։ Թուրքերէն կարեւոր լեզուի ուսման պատրաստ ղաց և այլոց համար մեծապէս օգտակ է։ 20000 բառ կը պարունակէ, յորս են նաև դիտականք, արհեստականք, և այլն։ Գինն ալ շատ դիւրամատչելի է. — 15 ղրշ։

ԳՈՐԾԱՐԱՆ ԶԱՎՈՒՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԴԻՄԱՑ

Թիւ 48

Զաւուշեան Ստեփան էֆէնտիի այս գործարանին մէջ՝ որ համբաւաւոր է իւր չինած կերպասներովը, յորս կը գտնուին նաև ֆլանէլի և ֆասոնի զանազան գեղեցիկ տեսակներն, ամէն ճաշակի յարմար և շատ տոկուն, — կը վաճառին նաև զուտ բուրդէ վայելուչ և սիրուն գոյներով չինուած վերմակի՝ բարձի ու բազմոցի երեսներ, սեղանի ծածկոցներ, պատուհանի վարագոյրներ, և այլն, որք յատկապէս բերել տրուած են Կիւրնոյ Մինասեան-Արապեան բազմարդիւն գործարանէն։ Զաւուշեան էֆէնտի պատրաստ է ճշդիւ և գոհացուցիչ պայմաններով կատարել թէ՛ կերպասուց և թէ՛ բուրդի համար ամէն յանձնարարութիւն մայրաքաղաքս և գաւառներէն։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒԿ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, և ամեն չղջային ախտերու եան, ուժաթափութեան և ախորութեան համար. կը չնչէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սա, տի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ և դրդրելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ ցուած կաղեր, գլխի ցաւեր կվանէր մարսողութիւնը կ՚արագաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ՝ ուժեղ և բնական դիրքը կդգենու։

ONCUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն և վէրք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրփխէնճէ), սրունքէ և ստեղնց վէրքեր կա՛մ բոլորովին կանցնին և կա՛մ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ յօդացաւ (եէկ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սրբաձաւ) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մանաւորապէս Պաղէշ-գարու Թաչ-խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տօքթ՚որ Հոլլօուէյ, ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց թիւ 533։

ՏՆՕՐԻՆ ԵԻ ՏԻՐ

Հ. Ս. Ա Լ Ա Ձ Ա Ձ Ե Ա Ն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՊԻՊԵՐԵԱՆ

Կ. Պոլիս Ջիչէք-բազար թիւ 23

ԲԱԹԻՈՒՄԻ

ԿԵՆԱՑ ԵՒ ՀՐԴԵՀԻ ԱԶԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

PATRIOTIC Life and fire assurance Company

Հիմնեալ 1824

Դրամագլուխ	Անգղ. Ոսկի		1,500,000
Վճարեալ դրամագլուխ	»	»	128,984
Պահեստի դրամ	»	»	250,000

Սոյն ընկերութիւնը դիւրամատչելի պայմաններով ամէն չէնք, կահ-կարասիք և ապրանք հրդեհի վնասուց դէմ կ՚ապահովագրէ։

Տնօրէն ընդհանուր Թուրքիոյ

ԱԼՊԵՐԻՈ ՀՕՖՄԱՆ

Ապահովագրութեանց և այլ տեղեկութեանց համար դիմել առ Կ. Պոլսոյ մասնաճիւղի տեսուչ

ՄՈՒՀՐԱՆ Ց. ՍԱՐԳԻՍԱՆ

Գործակալ Ա. պահովագրական Հնկերութեանց

Գալաթա, Պաղէշ-Գարու Թիւ 27, մաքսատան դիմաց։